ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2026 թվականի N 1090 - Ն

ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ԱՆՑՄԱՆ ԿԵՏԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԵՌՆԱՏԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ՝ ԱՌԱՆՑ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ՄԵԿՆՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ, ԱՌԱՆՁԻՆ ԲԵՌՆԱՏԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ՝ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐԻՑ ԲԱՑԹՈՂՆՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐԻ ԿԱՋՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԻ՝ ՀԵՐԹԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ, ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐԻ ԿԱՋՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐՈՒՄ ՀԵՐԹԱԳՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԱՅՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ԱՆՑՄԱՆ ԿԵՏԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՈՐՏԵՂԻՑ ԲԵՌՆԱՏԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԵԿՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԿԱՐՈՂ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ ՄԻԱՅՆ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ ՄՈՒՏՔ ԵՎ ԵԼՔ ԳՈՐԾԵԼՈՒՑ ՀԵՏՈ

Հիմք ընդունելով «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 69.1-ին հոդվածի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել՝

1) պետական սահմանի ավտոմոբիլային անցման կետերով Հայաստանի Հանրապետությունից բեռնատար տրանսպորտային միջոցների՝ առանց կուտակային կայանատեղի մուտք գործելու մեկնման դեպքերը և առանձին բեռնատար

տրանսպորտային միջոցների՝ կուտակային կայանատեղիներից բացթողնման առաջնահերթությունները՝ համաձայն N 1 հավելվածի.

2) կուտակային կայանատեղիների կազմակերպման գործունեություն իրականացնողների՝ հերթերի կառավարման համակարգին միանալու կարգը և կուտակային կայանատեղիների կազմակերպման գործունեության իրականացման պահանջները՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) Հայաստանի Հանրապետությունից մեկնող բեռնատար տրանսպորտային միջոցների՝ կուտակային կայանատեղիներում հերթագրման ծառայության վճարի առավելագույն չափը մեկ բեռնատար տրանսպորտային միջոցի համար չի կարող գերազանցել հինգ հազար դրամը (ներառյալ ավելացված արժեքի հարկը).

2) Հայաստանի Հանրապետությունից մեկնման ուղղությամբ բեռնատար տրանսպորտային միջոցների մուտքը «Բագրատաշեն» և «Ագարակ» պետական սահմանի ավտոմոբիլային անցման կետեր իրականացվում է միայն կուտակային կայանատեղի մուտք և կուտակային կայանատեղիից ելք գործելուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի և 2-րդ կետի 2-րդ ենթակետի, որոնք ուժի մեջ են մտնում ըստ յուրաքանչյուր անցման կետի առաջին կուտակային կայանատեղիի՝ սույն որոշման N 2 հավելվածի 9-րդ կետին համապատասխան գործարկման օրվանից:

4. Անկախ սույն որոշման 3-րդ կետից, սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը և 2-րդ կետի 2-րդ ենթակետը չեն կիրառվում, եթե պետական սահմանի միևնույն անցման կետով մեկնման ուղղության վրա գտնվող կուտակային բոլոր կայանատեղիների գործունեությունը սույն որոշման համաձայն կասեցված կամ դադարեցված է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

24.07.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ